Ուսումնական քարտերի կիրառումը տարբերակված ուսուցման գործընթացում

Աստղիկ Յուրիկի Հովսեփյան

Մանկավարժական ստեղծագործությունը ուսուցչի այնպիսի պրոֆեսիոնալ գործունեություն է, որի ընթացքում ստեղծվում են մանկավարժական խնդիրների լուծման տեսական և գործնական նոր միջոցներ, հնարներ, ուղիներ: [1; էջ 94-95], [3; էջ 19-43, 124-132]

Ուսումնական գործընթացում այդպիսի ստեղծագործական միտք ենք համարում տարբերակված, ուսումնական քարտերով առաջադրանքների կիրառումը:

Ի՞նչ նպատակով և ինչպե՞ս ենք ուսուցման գործընթացում օգտագործում քարտային առաջադրանքներ.

Ուսուցման գործընթացում ուսումնական քարտերի օգտագործումը աշակերտների մոտիվացիան բարձրացնող և արդյունավետ ուսումնական միջոց են: Դրանց կիրառությունը հնարավորություն է ընձեռում էլ ավելի արդյունավետ ընդգրկելու սովորողներին ուսումնական ակտիվության մեջ՝ առաջադրելով նրանցից յուրաքանչյուրի կարողություններին համապատասխան աշխատանք:

Ուսուցման գործընթացում ուսումնական քարտերի առաջադրանքները հնարավոր է վերաբերեն ցանկացած ուսումնական հարցի: Կարևոր է, որ քարտերում տեղ գտած հանձնարարությունները համապատասխանեն տվյալ դասարանի մակարդակին, ուսումնական նպատակին և ակտիվությանը:

Այսինքն ուսումնական քարտ կազմելիս պետք է հաշվի առնել այն, թե՝

-ո՞ր մակարդակի հմտություններ ու կարողություններ ունեցող աշակերտի համար է նախատեսված,

-ինչպիսի՞ն պետք է լինի բարդության աստիճանը,

-քանի՞ առաջադրանք պետք է ներառի ուսումնական քարտը,

-ի՞նչ տեսակի պատասխան է պահանջելու նշված առաջադրանքը:

Ուսումնական քարտերը պետք է կազմել պարզ: Դրանցում տեղ գտած առաջադրանքի պահանջը պետք է հասկանալի լինի աշակերտի համար: Քարտերի տեսքն ու կառուցվածքը ևս պետք է գրավիչ լինեն՝ աշակերտներին ոգևորեն դեպի հիմնախնդիրները լուծելու, խորհելու, հարցեր առաջադրելու:

Սովորողներին ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները տրվում են ըստ հանրակրթական դպրոցի երեք փուլերի՝ տարրական, միջին և ավագ, յուրաքանչյուրի համար երեքական մակարդակով, որոնք արտացոլում են

աշակերտների կողմից գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման տարբեր աստիճանները: [2; էջ 19-43, 124-132] Ուսումնական քարտերը հրաշալի միջոց են ուսուցման տարբերակման /դիֆերենցիայի/ համար: Ուսուցիչը կարող է քարտերի օգտագործումն աշակերտների համար դարձնել ուսումնական առօրյայի մաս: Աշակերտները քարտային առաջադրանքները հաճախ գերադասում են դասագրքում եղած առաջադրանքներից, քանի որ քարտի վրա հիմնականում մեկ առաջադրանք է տրված: Ըստ իրենց ցանկության և կարողության նրանք կարող են լուծել ճիշտ այնքան քարտերի առաջադրանքներ, որքան իրենց անհրաժեշտ է որևէ ունակության մեջ հմտանալու համար: Ուսումնական քարտերի առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը, բացթողումների լրացմանը կամ էլ՝ սովորողի առաջընթացին: Քարտերով առաջադրանք կարելի է տալ որպես տնային աշխատանք այն աշակերտներին, ովքեր ունեն տվյալ ուսումնական նյութը կրկնելու և ամրապնդելու, տվյալ թեմայի շրջանակներում ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու կարիք: Ուսուցիչը կարող է կազմել ուսումնական քարտերի այնպիսի հավաքածու, որը նպատակաուղղված է զարգացնելու աշակերտի ստեղծագործական ունակությունը: Այդ առաջադրանքները պետք է այնպիսի հարցեր ընդգրկեն, որ աշակերտը բազմակողմանի ուսումնասիրություն կատարի: Քարտային աշխատանքը պետք է միատարր հարցեր չպարունակի, որպեսզի ժամանակն իզուր չվատնվի:

Կարևոր հանգամանք է, որ ուսուցիչը չմիջամտի քարտի ընտրությանը՝ չտարբերակի աշակերտներին ուժեղների և թույլերի, այլ պետք է թույլ տալ, որ աշակերտն ըստ իր ցանկության ընտրի և կատարի իր կարողությանը համապատասխան կամ իրեն հետաքրքրող առաջադրանք:

Ուսումնական քարտերի կիրառումը անհատական, զույգերով կամ փոքր խմբերով

Հաշվի առնելով համագործակցային ուսուցման առավելությունն ու արդյունավետությունը, որոշ քարտային առաջադրանքներ հեշտ է օգտագործել զույգերով կամ փոքր խմբերով աշխատելիս:

Ստորև ներկայացնում ենք հետևյալ օրինակը՝

-դիցուկ փոքր խմբով աշխատանք է, խմբի յուրաքանչյուր անդամ տվյալ քարտային աշխատանքից ունենում է իր բաժին առաջադրանքը, հանրագումարում ամփոփվում և ստուգվում է արդյունքը,

-զույգերով աշխատանք է, կատարում են հերթով, ապա ստուգում մեկը մյուսին:

Ուսումնական քարտերը հնարավոր է օգտագործել նաև խաղի ձևով: Դրանք ունեն գործածման լայն հնարավորություն, որի շնորհիվ ուսուցման գործընթացը դառնում է բազմաբնույթ, հետաքրքիր և արդյունավետ:

Քարտային առաջադրանքները կարող են ունենալ տարբեր պատասխաններ.

1. Ընտրովի պատասխաններ ունեցող առաջադրանքի քարտերն ամենահեշտ օգտագործվողներն են: Աշակերտները համեմատաբար արագ են դրանք լուծել: Դրանց օգտագործումը իդեալական է թեստային աշխատանքին

պատրաստվելու համար: Քարտերի վրա պատասխանելը արագ և հեշտ է, քանի որ աշակերտը դրանում ընդամենը մեկ տառ է տեղադրում կամ ընդգծում: Եթե ձեռքի տակ ունենում են ճիշտ պատասխանների թերթիկ, աշակերտները կարող են հեշտությամբ ստուգել իրենց աշխատանքները և կատարել ինքնագնահատում:

2. Կարճ պատասխան ունեցող առաջադրանքներով քարտերի գլխավոր առավելությունն այն է, որ աշակերտին ավելի մեծ նվաճումներ է առաջարկում, քան ընտրովի պատասխան ունեցող քարտերը: Այսպիսի քարտերի հարցերին պատասխանելը ավելի երկարատև գործընթաց է:
3. Բաց հարցերը պարունակող ուսումնական քարտերը մեկ ստույգ պատասխան չունեն: Հնարավոր է մի քանի ընդունելի պատասխան լինի, յուրաքանչյուրի մոտ առաջանա յուրահատուկ պատասխան: Այս տեսակ քարտերը մեծ հնարավորություն են ընձեռում <<կրեատիվ>> մտածողների համար, որի պատճառով էլ այն հաճախ սովորողների ամենասիրելի քարտի տեսակն է համարվում:
4. Ակտիվության քարտերում, սովորաբար, հարցեր չեն առաջադրված: Դրանցում տրված է աշակերտի կողմից կատարվելիք առաջադրանքը: Այսպիսի ուսումնական քարտը հարմար է տնային առաջադրանքի համար:[7; http://kargiskola.ge/teachers/posters/broshura/broshuram- 21]

Քարտային աշխատանքի համար, ինչպես նաև ուսուցման գործընթացում ուսուցչի կողմից կազմակերպված յուրաքանչյուր աշխատանքում պահանջվում է սեր, գործի իմացություն, ջանք ու եռանդ, և ինչպես նշել է դարի առաջին կեսի հայ լուսավորական շարժման նշանավոր դեմքերից մեկը, գրող հրապարակախոս գիտնական և մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանը՝ մանկավարժական արգասավոր գործունեության հետ է համատեղվում մանկավարժական ստեղծագործական աշխատանքը: Նա խորհուրդ է տալիս ուսուցիչներին՝ ուսումնադաստիարակչական աշխատանքի հաջողության համար ուսումնասիրել երեխաների հոգեբանությունը, նրանց անհատականությունը և կարողությունները:[3; էջ 19-43, 124-132]

Քարտային առաջադրանքից բացի աշխատանքի գնահատումն ու ստուգումը ևս կարելի է անցկացնել տարբերակված ձևով, ընդ որում շեշտադրելով հետևյալ գործոնը՝ <<սովորեցնելով սովորում ենք>>: Նպատակահարմար է թե՛ աշխատանքի ընթացքում, թե՛ գնահատման ժամանակ, որպես ուսուցչի օգնական ներգրավել սովորողներին: Օրինակ՝ 2-րդ մակարդակի կարողություններ ունեցող աշակերտների կատարած աշխատանքի համար, որպես խորհրդատու-ստուգող և ուսուցչի օգնական կարող են հանդես գալ 3-րդ մակարդակի կարողություններ ունեցող աշակերտները, իսկ 1-ին մակարդակի կարողություններ ունեցող սովորողների համար, որպես խորհրդատու-օգնական կարող են հանդես գալ 2-րդ և 3-րդ մակարդակի կարողություններ ունեցող սովորողները: Հաշվի առնելով դասարանի ուժեղ և թույլ կողմերը՝ ուսուցիչը կարող է դասագործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար հնարամտորեն կազմել իր դասարանի աշակերտների ուսումնական մակարդակին համապատասխան ուսումնական քարտեր: Քարտային աշխատանքը տարբերվում է իր

բազմազանությամբ, բազմաբնույթ գործածման լայն հնարավորությամբ, կիրառելի է դասապրոցեսի ցանկացած ժամանակահատվածում (սկզբում, մեջտեղում, վերջում): Ստորև ներկայացված աշխատանքները համապատասխանում են տարրական դպրոցում չափորոշչահեն ուսումնական գործընթաց կազմակերպելուն:[2; 88 էջ] Դրանցում ներառված են 1-4 դասարանների <<Մայրենի>>, <<Մաթեմատիկա>>, <<Ես և շրջակա աշխարհը>> առարկաներից անցկացվող քարտային աշխատանքների նմուշ օրինակներ, որոնք բավական երկար և արդյունավետ օգտագործում ենք մեր ուսումնական գործընթացում:

Դրանք տարբեր պահանջներ պարունակող քարտային աշխատանքների օրինակներ են՝

- տրված թվերը դասավորիր աճման կամ նվազման կարգով,

-հաշվիր գումարը, տարբերությունը …

- խնդիրը համառոտագրիր և լուծիր,

- տրված թվերից ընդգծիր զույգ կամ կենտ թվերը,

- տրված թվերը մեծացրու 3 անգամ և այլն:



Մեր աշխատանքային փորձը տարրական դպրոցում ցույց տվեց, որ տարբերակված առաջադրանքներ պարունակող ուսումնական քարտերով սովորեցնելն էլ ավելի արդյունավետ է դառնում, քանի որ յուրաքանչյուր քարտում առկա աշխատանքը համապատասխանում է տվյալ սովորողի ուսումնական կարողություններին, որն ինքնին ապահովում է և՛ ուսուցում, և՛ ամրապնդում՝ հնարավորություն տալով սովորողին անցում կատարել դեպի հաջորդ մակարդակի աշխատանքը: Այսօրինակ աշխատանքը կարելի է հաճախ կրկնել, այն ժամանակատար չէ, աշակերտների կողմից կատարվում է հաճույքով՝ անհատապես, զույգերով կամ խմբային համագործակցությամբ:

Դասարանական (անհատական կամ խմբային), տնային քարտերով տարբերակված աշխատանքների նմուշ օրինակները աշակերտների

բնութագրմամբ ամենահաճելի, ամենասիրելի աշխատանքներն են համարվում: Ստորև ներկայացված են քարտային առաջադրանքների նմուշ-օրինակներ Մաթեմատիկա առարկայից 1-4-րդ դասարանի աշակերտների համար:

Մաթեմատիկա-2

Դաս <<Եռանիշ թվին հարյուրակների գումարում և հանում>> [**4;**էջ 148-150]

1-ին մակարդակ՝

Գրիր նախորդ և հաջորդ թվերը.

…	31	32	…
…	624	625	…
…	738	739	…

2-րդ մակարդակ՝

Ըստ օրինաչափության տրված թվերից առաջ և հետո ավելացրու ևս 2-ական թիվ.

…	…	340	440	540	…	…
…	…	440	450	460	…	…
…	…	555	656	757	…	…

3-րդ մակարդակ՝

Ըստ օրինաչափության տրված թվերից առաջ և հետո ավելացրու ևս 2-ական թիվ.						
…	…	335	342	349	…	…
…	…	121	231	341	…	…
…	…	228	256	284	…	…

Մաթեմատիկա 3

Բազմանիշ թվի և երկնիշ թվի արտադրյալի գտնելը: [**5;**էջ181-183]

1-ին մակարդակ՝

Հաշվիր արտահայտության արժեքը՝

30 * 6 =	621 : 3 =
4 * 60 =	642 : 3 =
34 * 100 =	2010 : 3 =

Արտահայտիր նշված միավորներով.			
2 կգ 250 գ =	գ	7520 գ =	կգ գ
3 կգ 650 գ =	գ	4000 գ =	կգ
7 կգ =	գ	6025 գ =	կգ գ

2-րդ մակարդակ՝

Համառոտագրիր և լուծիր խնդիրը.
Հողակտորի 1 քառակուսի մետրն արժե 15000 դրամ: Որքա՞ն պետք է վճարել 24 մետր քառակուսի մակերեսով հողակտոր գնելու համար:

Համառոտագրիր և լուծիր խնդիրը.
Հայկն ուներ 1460 դրամ: Նա այդ դրամի կեսը վճարեց գնդակի համար, իսկ մյուս կեսը տվեց Արամին: Հայկը որքա՞ն դրամ տվեց Արամին:

3-րդ մակարդակ՝

Համառոտագրիր և լուծիր խնդիրը.

Երբ վարպետն օգտագործեց բաքի ջրի կեսը, բաքում մնաց 1650 լ ջուր: Որքա՞ն ջուր կար բաքում, նախքան օգտագործելը:

Ըստ օրինաչափության լրացրու դատարկ վանդակը

2	**3**	**4**	**5**
5	**7**		**11**

Մաթեմատիկա 4

Դաս <<Տարբեր կարգի գործողություններ և փակագծեր պարունակող արտահայտություններ>> [6; էջ 15-19]

Քարտային աշխատանք՝ 1-ին մակարդակ

Հաշվիր արտահայտության արժեքը. 32406 – 225 : 5=																			

2-րդ մակարդակ՝

Հաշվիր արտահայտության արժեքը. 42588 : 7 – 205 * 6 + 960 :3=																						

3-րդ մակարդակ՝

Հաշվիր արտահայտության արժեքը. 2154-55 * (42240 : 60-704) =																						

Բազմաթիվ փորձերը, որոնք իրականացրել ենք հմ. 194 հիմնական դպրոցի տարրական դասարաններում, թույլ է տալիս եզրակացնել, որ քարտային աշխատանքների օգտագործումը բարձրացնում է ուսումնական գործունեության արդյունավետու- թյունը, սովորողների մոտ առաջանում է դրական տրամադրվածություն, հետաքրքրություն, ճանաչողական և ստեղծագործական կարողությունների զարգացում, ուսումնական գործունեության բազմազանություն և, որ ամենակարևորն է՝ անհատական մոտեցում դասարանի յուրաքանչյուր աշակերտին, իսկ կազմակերպված համագործակցային աշխատանքում՝ սովորողի սոցիալականացման հմտությունների ձևավորում:

Քարտային աշխատանքի շուրջ կատարված SWOT վերլուծությունը հնարավորություն կընձեռի խուսափել սխալներից և ճիշտ կազմակերպել ուսումնական գործընթացը ուսումնական քարտերի գործածության միջոցով:

SWOT (ՈՒԹՀՎ)-վերլուծություն

Ուժեղ կողմերը՝	**Հնարավորությունները՝**
-անհատական(տարբերակված) մոտեցում -անցածի կրկնում և ամրապնդում, -ստեղծագործական մտածողության ձևավորում, -աշակերտների կողմից բարձր տրամադրվածությամբ աշխատանքի կատարում, -քիչ ժամանակում արդյունավետ աշխատանքի կատարում, -համագործակցային տարրերի կիրառմամբ միջանձնային հարաբերությունների կայացում	- միջառարկայական ինտեգրված մոտեցում, - մեկ մակարդակից մյուսին անցնելու հնարավորություն, - ձեռք բերված կարողությունների և հմտությունների կիրառում, - գիտելիքի ամրապնդում, -ուսման մեջ առաջընթացի ապահովում, -հետազոտական աշխատանքի իրականացում

Թույլ կողմերը՝	Վտանգները՝
-դասարանի մակարդակին չհամապատասխանող աշխատանքի հանձնարարում, որը կառաջացնի անելանելի վիճակ, -դասարանի մակարդակից ցածր աշխատանքի հանձնարարում, որը կառաջացնի անհետաքրքրություն և անլուրջ մոտեցում:	- ժամանակի կորուստ՝ միատարր աշխատանքի պատճառով, -ուսումնական ծրագրից հետ մնալու հավանականություն, -համագործակցային ուսուման տարրերի չպահպանման հետևանքով խմբային աշխատանքի խաթարում:

Բանալի բառեր

Ուսումնական քարտեր, տարբերակված ուսուցում, արդյունավետ ուսումնական գործընթաց, անհատական մոտեցում, ստեղծագործական ունակություն, բազմաբնույթ գործածում, համագործակցային ոսուցում, զույգերով և անհատական աշխատանք, թեմայի յուրացում, բացթողումների լրացում, SWOT վերլուծություն:

Ուսումնական գործընթացում ուսումնական քարտերի օգտագործումը աշակերտների մոտիվացիան բարձրացնող արդյունավետ միջոց է, որը կիրառում ենք մեր պրակտիկայում շուրջ 14 տարի : Քարտային աշխատանքների միջոցով աշակերտներից յուրաքանչյուրն ըստ իր կարողության ներգրավվում է ուսումնական գործընթացին: Այդ քարտերի առաջադրանքները կարող են վերաբերել յուրաքանչյուր ուսումնական հարցի, բազմաբնույթ գործածելի են: Ուսումնական քարտ կազմելիս պետք է հաշվի առնել առաջադրանքի բարդության աստիճանը, առաջադրանքների քանակը, պատասխանի տեսակը, և , թե որ մակարդակի կարողություններ ունեցող աշակերտի համար է այն նախատեսված: Ուսումնական քարտերը կիրառելի են և՛ դասագործընթացի ցանկացած ժամանակահատվածում, և՛ տնային առաջադրանքներ հանձնարարելու, և՛ աշակերտի մոտ ստեղծագործ ունակություններ զարգացնելու համար: Ուսումնական քարտերը հրաշալի միջոց են ուսուցման տարբերակման՝ անհատական մոտեցման համար, բարձր արդյունավետությամբ կիրառելի են համագործակցային ուսուցման ժամանակ՝ զույգերով, փոքր ու մեծ համագործակցային խմբերով աշխատելիս: Ուսումանական քարտերի առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը, բացթողումների լրացմանը կամ սովորողի առաջընթացին: Ուսումնական քարտերն օգտագործելիս պետք է հաշվի առնել ներկայացված SWOT վերլուծությունը՝ թույլ և ուժեղ կողմերը, հնարավորություններն ու վտանգները:

Исползование учебных карточек в процессе дифференцированных обучений

Ключевые слава

Образовательные карты, дифференцированное обучение, продуктивный учебный процесс, индивидуальный подход, творческие способности, разнообразное

использование, совместное обучение, работа в парах и индивидуальная работа,освоение темы, заполнение ошибок, SWOT-анализ.

Использование образовательных карт в процессе обучения - эффективный способ повышения мотивации учеников, который мы применяем в своей практике уже около 14 лет. Каждый из учеников вовлекается в образовательный процесс в соответствии со своими способностями посредством карточных работ. Задания этих карточек можно применить к любому учебному вопросу, их можно использовать по-разному. При разработке учебной карты следует учитывать сложность задания, количество заданий, тип ответа: на какой уровень способностей рассчитан ученик. Учебные карточки можно использовать в любое время во время урока для выполнения домашних заданий и развития творческих способностей ученика. Учебные карточки - отличный способ выделить индивидуальный подход к обучению, и их можно очень эффективно использовать в совместном обучении при работе в парах, малых и больших совместных группах. Задания по образовательном карточкам могут быть направлены на усвоение темы, заполнение пробелов или продвижение учащегося.При использовании обучающих карточек следует учитывать SWOT-анализ: сильные и слабые стороны, возможности и риски.

The use of study cards in the process of studying

Key words

Study cards, differentiated study, effective study process, individual approach, crative skill, multi-use, corporation study, duo- and individual work, learn of the content, correction of the mistakes, SWOT analysis.

The use of study cards in the process of studying is considered is the effective method of the pupils motivation which we use in our practice for about 14 years. Through the cards works each pupil is involved to the study process according to his skills. The tasks of those cards can refer to any studying problem they use multi nature. While preparing the studying cards it should be considerate of the level task difficulty the continuity of task, the type of answer and also what levels of skills of pupil of anticipates. The study cards are applicable both for any period of study process as well as of giving home tasks and developing skill of the pupil. The study cards are great method for differentiated teaching for individual approach are effectively used for during coorporating teaching in process and while working with small or large coorporational groups the tasks of teaching cards

can be deareched to the absorbstation of the theme, correction of mistakes or the pupils progress. While the using the teaching cards the strong and dangerous each sides possibilities should be taken into consideration of the SWOT analysis.

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու.: Երևան, <<Մանկավարժություն>>, 2005թ, 456 էջ (էջ 94-95)
2. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր: ՀՀ կրթության և գիտության նախարարի 23.11.2007թ.հմ.1153-Ա/ք հրամանի: 88 էջ
3. Միրզաբեկյան Ջ. Մ., Թաղիադյան Մ., Երևան 1971, էջ 19-43, 124-132
4. Մկրտչյան Ս., Աբրահամյան Ա., Իսկանդարյան Ս. <<Մաթեմատիկա 2>>: Երևան, Զանգակ հրատարակչություն, 2017, 175 էջ:
5. Մկրտչյան Ս., Աբրահամյան Ա., Իսկանդարյան Ս. <<Մաթեմատիկա 3>>: Երևան, Զանգակ հրատարակչություն, 2015, 191 էջ:
6. Մկրտչյան Ս., Աբրահամյան Ա., Իսկանդարյան Ս. <<Մաթեմատիկա 4>>: Երևան, Զանգակ հրատարակչություն, 2013, 175 էջ:
7. http://kargiskola.ge/teachers/posters/broshura/broshuram- 21 (22.06.21թ.,ժամը՝22:45)

Աստղիկ Յուրիկի Հովսեփյան/ դասավար, 15 տարվա աշխատանքային փորձ, 1-ին կարգի տարակարգ, ք. Երևան, Արմեն Հովհաննիսյանի անվան հմ.194 հիմնական դպրոց/ ՀՊՄՀ <<Կրթության կառավարիչ>>-մագիստրոսի կոչում/ հայցորդ, ՀՊՄՀ <<Մանկավարժության>> ֆակուլտետ 5-րդ կուրս

astxik@gmail.com